



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

« 11 » սեպտեմբերի 2019 թվականի N: 422-Ձ ք.Գյումրի

ՍՈՆՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՅԱՂԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշման N 1 հավելվածի 11.3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Սոնյա Հարությունյանի 2019 թվականի սեպտեմբերի 9-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սոնյա Հարությունյանին 2019 թվականի սեպտեմբերի 11-ից նշանակել «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով տնօրենի ընտրությունը (նշանակումը):

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

